Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

15.02.2017թ.-ին կնքված թիվ PD-121-02-17

Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք.Երևան «25 » մայիսի 2017թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ Հաճախորդ)՝ ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Սահակյանի, մի կողմից, և, «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ն, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 15.02.2017թ.-ին կնքված թիվ *PD-121-02-17* Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 3.2 կետով «սահմանվում է» բառից հետո **«54 220 000 /հիսունչորս միլիոն երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերը փոխարինել **«69 620 000 /վաթսունինը միլիոն վեց հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն»** բառերով:

2. Այլ Պայմաններ

1. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 15.02.2017թ.-ին կնքված թիվ PD-121-02-17 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 (չորս) օրինակից: Համաձայնագրի 3 (երեք) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

4.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507464
Հեռ.՝ /010/ 514-548

Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար՝

---------- Հ.Ավագյան

Հաճախորդ՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, 0015, Մ.Խորենացու 3
ՀՎՀՀ՝ 02647057
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ՝ 900013202016,
900013574018, 900011054013
Հեռ.՝ /060/ 54-44-44

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Ա.Սահակյան

Կատարող՝ Լուսինե Հովսեփյան
Հեռ.՝ 514-548